ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հունիսի 21-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի ապրիլի 25-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրի 1-ին չափաբաժնի մասով մնացած 338 քմ ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներից 336.15 քմ աշխատանքների, 2-րդ չափաբաժնի մասով մնացած 23 քմ ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներից 20.25 քմ աշխատանքների կատարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը 2024թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՀՈՒՅՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 21.06.2023թ. N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«25» «04» 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ստեփանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 21.06.2023թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 1-ին չափաբաժնի մասով մնացած 338 քմ ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներից 336.15 քմ աշխատանքների, 2-րդ չափաբաժնի մասով մնացած 23 քմ ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներից 20.25 քմ աշխատանքների մասով **5 095 953 (հինգ միլիոն իննսունհինգ հազար ինը հարյուր հիսուներեք)** ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը 2024թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, 16 թղմ., 18, բն. 41
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01260623
Հ/Հ՝ 900011005841	Հ/Հ՝ 16048260010500
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Ս. Ստեփանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 25 » « 04 » 2024թ. կնքված N 5 համաձայնագրի

(Հավելված N 2
« 21 » հունիսի 2023թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45421119/5	Ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ	4 694 334.75	4 694 334.75	4 694 334.75	4 694 334.75	4 694 334.75	4 694 334.75	4 694 334.75	4 694 334.75	**4 694 334.75**
2	45421119/6	Ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ	401 618.25	401 618.25	401 618.25	401 618.25	401 618.25	401 618.25	401 618.25	401 618.25	**401 618.25**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, 16 թղմ., 18, բն. 41
ՀՎՀՀ՝ 01260623
Հ/Հ՝ 16048260010500
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ս. Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ